

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տարեկան 8 Ձր.  
Վեցամսեայ 4 Ձր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ


Տարեկան 10 Ձր.  
Վեցամսեայ 5 Ձր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2 Տօր.  
Վեցամսեայ 1 Տօր.

ԿԱՆԻՍԵԿ

ԾԱՆՈՒԾՄԱՆ ՏՈՂԸ  
20 ՄԵՆ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

ՀԱՍՑԷ

Rédaction du Journal

«Travounk»

Varna

ГЕДЕКАЦИЯ НА

ВѢСТНИКЪ

«Правуникъ»

Варна

Գրողները եւս չեն տրոշիր

ՀԱՅ ՇԵՐԻԱԹՃՐՆԵՐԸ

Մեր նախորդ թիւի խմբագրապետի մատնանշելէ յետոյ Շա-րիկեանի և Վարդգէսի խուժա-նապետական վարմունքը Ազգ. երեսփ. ժողովոյ մէջ, և նմանցնե-լով զայն անցեալ տարուան մարտ 31ի թուրք ռեաքսիսներէն ըն-թացքին, յողումը սա տողերով կը վերջացնէինք: Այս առթիւ վերջնականապէս և յստակօրէն պարզուած ըլլալով դաշնակցական կոչուած խուժանավարներուն մօտ տոնարան, Ս. Պատրիարքին և երես-փոխաններուն կը մնայ յառաջի-կայ նիստը դռնփակ ընել և ու-րիշ զգուշական միջոցներով ա-պահովել երեսփոխաններու կար-ծիքի, խօսքի և քուէի ազատու-թիւնը:

Ուրբաթ օր մինչ մենք այդ տողերը կը գրէինք հոս, նոյն պա-հուն Ղալաթիոյ եկեղեցւոյ բակը խորհրդարանի մուտքին առջև նախորդէն շատ աւելի վայրագ տեսարան մը կը պարզուի եղբր միւսնոյն հերոսներու սարքումով, հոն խորհրդարան գացող երես-փոխաններ կը սուլուին, կը թշ-նամանուին ու կը քանակուին: Իսկ այդ դաւը սարքող խուժա-նապետները կը ծափահարուին: Ահա թէ ինչ կը գրէ այդ դէպ-քի մասին Հայրենիքը:

«Այս ուրբաթ օրուան Ազգ. ժողովը գումարուեցաւ ճիշդ այն պայմաններուն մէջ, որոց մէջ Օսմ. Մէպուսական ժողովը նիստ կ'ընէր անցեալ տարի Մարտ 31ին: Տարի մը առաջ, Այս-Սօֆիայի հը-րապարակը, խորհրդարանին դը-րան առջև, խռնուած էր ամբոխ մը մոլորած զօրքերու, որ կ'սպառ-նար մեծամասնութեան երես-փոխաններուն անոնցմէ մէկ քա-նին սպաննելու չափ, և կը ծա-փահարէր ուրիշները: Սպաննու-թիւնը միայն պակասեցնելու եղաւ այս ուրբաթ մեր Ղալաթիոյ խոր-հրդարանին առջև: Երեսփոխան-ներ սուլուեցան, հայուչի բռնուե-ցան ու ձեռնուեցան, մինչ քիչ հարուեցան մէկ քանին որոնք հաճելի էին ամբոխին: Մեր ամ-բոխն ալ կազմակերպուած ոչ ոք-

ժողովուած էր քանի մը վարիչ-ներէ, ինչպէս Մարտ 31ի ուղ-տաքէսքը: Շէրիաթ իսլէմաքի ազդակին տեղը կը բռնէր «ե-կեղեցիները կ'ուզենք» ազդակը: Կրօնամոլութեան ազդակը փո-խարինուած էր կուսակցամոլու-թեան ազդակով: Կարգ մը միա-միտ, բիրտ ու տգէտ հոգիները շարժելու և մինչև ոճիր մղելու համար: Մովզէրներու տեղ՝ բի-րեր ու ճակատներ կային: Եւ ճիշդ ինչպէս որ Մարտ 31ի օրը գու-մարուած Մէպուս. ժողովը ուղ-տաքէսքին ճշնումին ու սարսա-փին տակ որոշումներ տուաւ այն-պէս ալ մեր Ազգ. ժողովին մե-ծամասնութիւնը քուէարկեց ու-րոշում մը զոր չէր ուզեր, զոր պիտի չքուէարկէր եթէ չըլար պատուհաններուն տակ կազմա-կերպուած սարսափը, ներսմտնող երեսփոխաններուն եղած ընդու-նելութիւնն և հոգէն դուրս ել-լելու պահուն իրեն սպասող սպառ-նալիքը:

«Մարտ 31ը, տարի մը ետքը միայն հինգ օր առաջ, կը կըրկ-նուէր միայն մեզի Հայոցս հա-մար:

«Ամիսներէ ի վեր շէրիաթի կ'ըսէին մեզի: Տեսնուեցաւ թէ բուն շէրիաթիները այդ ըսող-ներն էին ճիշդ:»

Այս ամօթաբեր դէպքերէն ի վեր հրաժարականներու տարափ մըն է որ կը տեղայ երեսփո-խաններու և վարչութեան անդամ-ներու կողմէ: Բոլոր լուրջ պատ-ուաւոր անկողմնակալ և անշա-հախիւքի աւանաւորութիւնները բողոքելով կը քաշուին ազգային պաշտօնէ և հրապարակը կը մը-նայ առ այժմ խուժանավարնե-րուն: Այդ հրաժարականներէ մին ահա, որ շատ յատկանշական է: Մեծ, Ատենապետ էֆ. . .»

«Ղալաթիոյ եկեղեցիին բակին մէջ «զարանակալ կազմակերպիչ Սօֆիա-«ճիւղերու ձեռքն իջնալու յօժարութիւնը «չզգալով իմ մէջս, և Ազգ. ժողովոյ «սեմներուն վրայ Ազգ. երեսփոխաննե-«բուն թշնամանութիւն, և գրչի ազա-«տութեան խղճի ազատութեան ու «խօսքի ազատութեան բռնարարներուն «դէմ բողոք ոյժովս բողոքելով, կը փո-

«Թամ իմ հրաժարականս հասցնել ձեզ, «կար և կարողութիւն մաղթելով եղե-«սիոյ ապագայ երեսփոխանին կողերուն «և սակոքներուն:

«Խնդրելով որ ընդունիք հրաժար-ողջոյնս, Մեզմ ազգիս անձնուէր ԲԻՋԱՆԻ ՔԷՋԵԱՆ Հր. երախտան եղբարիդ» Բերա, մարտ 26, 940

Իայց խուժանավարները զսպե-լու և օրինաւորութիւնը յարգել տալու միջոցը հրաժարիլը: Մի-լիոնաւոր ժողովորդի մը մէջէն 30-40 ապուշ մարդամեքենանե-րու յիմարական մէկ ընթացքին պատճառաւ ամբողջ ազգին քէն ընելով պաշտօնէ քաշուիլը հաս-տատման թեան պակասէ և կամ-քի տկարութեան առաջ կուգայ կը ցաւիք որ այդ տկարութիւնը առաջին անգամ ցոյց տուողները եղան վարչութեան և երեսփոխա-նութեան երկու ատենապետները որոնց անկ էր ամէնէն աւելի հա-տատ պահել իշնեց դիրքը և ա-նով ազգային իշխանութիւնը: Սրի-կաները, խուժարաբները և օրի-նազանցները զսպելու համար եր-կիրը օրէնք և գործադիր իշխա-նութիւն ունի: Երեսփոխանի ըմ-բոստները զսպող իշխանութիւնը պարտաւոր էր Պալատը ըմբոստներն ալ զսպել և կանխարգել զգուշա-կան միջոցներ ձեռք առնելու եթէ իրեն դիմում ըլլար: այդ զգուշա-ւորութեան պէտքը զգացուած էր գոնէ շարաթներէ ի վեր: Այժմ այդ անհրաժեշտ և ստիպո-ղական դարձած է նորագոյն դէպ-քերով, ապահովելու համար ե-րեսփոխաններու կարծիքի ու քուէի ազատութիւնը յառաջիկայ նիս-տերուն: Առ այս Ս. Պատրիարքը պարտի իր դիրքին ու իր դերին տէրը ըլլալ:

Յ. Գրուպիք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒ ԻՒՆ

Տեղւոյ Օսմանեան հիւպատո-սարանի կողմանէ թաղական խո-հրդոյս ուղղուած ամսոյս 2է թիւ ա-կիր և 29 թուահամար պաշտօ-նագրի մը համաձայն, առեւտու-րի ուսման և կամ ուրիշ գործի պատ-ճառաւ քաղաքս գտնուող Օսման-եան հիւպատակ ազգայինը որոնց

զ'նուո սակոն տարիին որոշ չէ շատատուած, ներկայ յայտարա-րութեան թուականէն սկսեալ մէկ տարուան համար թույլտուութիւն եղած է որպէս զ' դիմեն տեղւոյս Օսմ. հիւպատոսարանին ի ձեռին ունենալով հրենց Օսմանիէ թէգ-քերէն և կ'օր անց ոչ իրենին տա-րի ի սխալը ճշտուելու համար:

Թաղական Խորհուրդ

Վաւերացի Ս. Սարգիս Եկեղեցւոյ

ԱԶԳԱՅԻՆ

Էլ յիշածնի կաթողիկոսական դիւանա-տանը խուզարկուելէ եւս կառա-վարութեան կողմէ: Վեճ. կաթողիկոսը բնաւ առարկութիւն չէ ըրեր, ընդհա-կառա՛կը ազգային հոգեւոր բարձրա-գոյն աթոռը ու գիր է վեր պահել ամէն կասկածներէ:

— Ազգային երեսփոխաններու դէմ անցեալ ուրբաթ օր դաշնակցականնե-րու գործած խայտառ սկուլթանց պատ-ճառաւ ի մէջ այլոց Տ. Մինաս Զեքազ ալ հրաժարած է սա լակոնական հրա-մարականը դրիւով: «Զեմ կարող երեսփոխանութիւն ընել ամբոխային ճշնումի տակ:»

Ս. Տ. Հնչալ. կուսակցութեան վարիչ մարմինը Պալատի թիւթերուն մէջ յայ տարից թէ ունէ մասնակցութիւն չէ ունեցած յիշեալ ցոյցի: Ինչ եւ խորապէս կը ցաւի կատարուած եղե-լութեանց համար:

— Ատենա ի հայ քանտարկեալներ եւագրաւ մը իւրեց ազատ արձակու-թիւնը եւ Սուլթանին գահակալու-թեան տարեգալ ձին ստիւթի:

— Ատեն յի իրիսալ թուրք թերթի խմբագիր Իսաա Ֆիքրի շան-երեւը Պէրուի մէջ կողորդի հիւծախտէ բռ-նուած սատկերէ: Հակառակ ժէօն թիւրք կուսակցութեան չեմօզանքին, նախախնամութիւնը իսկ չը թողուց որ ապրի այլ հոյ կեր գաղանք: Տա-րուը իր մօզսակիցներուն:

— Զէյթունէն եւ Զօգ Մարգարանէն խիստ տխուր լուրեր կը հասնին հայ ժողովորդի շքաւորութեան մասին եւ անմթական չպատ կը խնդրուի:

Ժ. օն թիւրք կառավարութիւն, եթէ ոչ իր սեղսակցութեամբ, գոնէ իր ա-պիկարութեամբ մոխրացած կիրկիթ ընակիչներուն հազի հ. ճ. դաւ քանի մը հաշար ոսկի յատկացնել: Բնիշ Պալա-տոյ թերթերուն մէջ կը կարդանք թէ 300 հսկար ոսկի յատկացած է ար-տասահմանէ: Թուրքիա քաղաքի խ-լամներու, որոնք կայաւանին ծախած ու գր. անիւն լեցուց ծ աեղափոխու-թիւն կրնեն պարգաւէս քմահաճոյքի համար: ձեւնեն Կրդ. եղ)



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԹԱՂԱԿԻՐՆԵՐՈՒ ԱՅՑԵՐԸ

Արեւելքի վեհապետական ալ-  
ցելութիւնները աւետարտութեան  
համարուն վերաբացումին խա-  
ղաղութեան բաւական երկարատե  
չըլանի մը: Պալագանի երկու քա-  
լաւ վեհապետներուն նախ Բե-  
զերսպուրկ և յետոյ Կ. Պոլիս  
ալցելութիւններուն պիտի յա-  
ջուգէ կ'ըսուի Մօնթէնէկոյի նի-  
քօլա չիշխանին այցը Ի Պոլիս  
իսկ յառաջիկայ աշնան Օսլթա-  
նըն ալ հաւանաբար պիտի պա-  
տասխանէ այդ ալցելութեանց:

Ֆերմանան թագաւորից Բե-  
զերսպուրկ ալցելութեան նախըն-  
դօրին ընդհանուրի կարծիքը  
այն էր թէ Ռուսիոյ ղեկավարու-  
թեան տակ Պալագանեան դաշնակ-  
ցութիւն մը կը պատրաստուի  
ընդդէմ թուրքիոյ, որպէսզի այս  
վերջինին ուժեղանալու և վերա-  
կազմուելու միջոց չի տրուած և  
նուազ զոհողութեամբ անոր քա-  
նի մը մասերն ալ անջատուին  
ի նպաստ նոր դաշնագործներուն:

Եւրոպական մէկ քանի մեծ օ-  
րագէտներու հաւաստումին նայե-  
լով, այս ծրագիրը անպայման  
ժամանակի մը համար հետա-  
ձգուեցաւ Բեզերսպուրկի մէջ, ուր  
Անցլիոյ և Ֆրանսայի դեսպան-  
ները կարող եղան համոզել Ռու-  
սաց Չարք Եւ Ետ կընայ առ այս-  
ժամ Պալագանեան դաշնակցութիւն  
մը կազմակերպելէ, որպէսզի  
Թուրքիան չի նարկարուի Գեր-  
մանիոյ և Աւստրիոյ գիրկը իր-  
նալու, որուն կրնար հետեւիլ նաև  
Ռումանիան, այլ ընդհակառակը  
խորհուրդ տուին Չարքին և իր  
նախարարներուն որ Պալագանի  
այս վեհապետները համոզեն  
Թուրքիոյ մերձեցալու, ինչ որ ի-  
րեց անտեսական անմիջական  
չափերն ալ կը պահանջեն: Սա  
պետութիւններու քաղաքացիին  
ձգտումներուն իրազորութեամբ  
ապագային թողու եւ  
առ այժմ անտեսական չափերը  
հետապնդելու այս խորհուրդը  
հաւանութեանը արժանացաւ թէ՛  
Ռուս թէ՛ Պոլսկար և թէ՛  
Սերպ վարիչ չըջանակներուն, և  
որով Անգլիան ձեռքի տակէ յաջ  
թանակ մը ևս տարած եղաւ Թուր-  
քիան Գերմանիան հեռու պահե-  
լու իր և Գերմանիան միմեկ ձե-  
գելու բաւական հին ծրագիրին  
մէջ:

Բեզերսպուրկի մէջ կ'այա-  
ցած այս համաձայնութեան հիման  
վրայ Պոլսկար և Սերպ վեհապետ  
ները իրենց նախարարներ, ու ըն-  
կերակցութեամբ յաջորդաբար  
Պալիս այցելելով զԼթ ժամանակի  
մը համար ապահոված եղան Արև  
ելքի խաղաղութիւնը և հիմը դը-  
րած անասական կարգ մը հա-  
մաձայնութեանց: Սերպիան ամէնէ

տեւի պէտք ունէր Թուրքիոյ հետ  
անտեսական համաձայնութեան  
մը, Սէլանիկի ճամբով աղատ ծով  
արտածելու համար իր արտա-  
դրութիւնները և ներածելու հա-  
մար ռազմական և այլ պիտոյք-  
ներ: Մինչև ցարդ Սերպիան չու-  
նենալով աղատ ծովի ճամբայ մը  
իր առջևը Աւստրիոյ քմահաճոյք-  
ներուն համակերպիլ պարտա-  
ւորուած էր: Սերպիան աւելի պի-  
տի ոգտուի Դանուբ Ատրական եր-  
կաթուղոյ շինութեամբ, որով  
բացարձակապէս անկախ պիտի ըլ-  
լայ իր անտեսական մրցումին  
և ռազմական պատրաստութեանց  
մասին: Վերջին տասը տարուան  
միջոցին Սերպիոյ առեւտրական  
հաշուեկշիւը կրկնապատկուած է  
արդէն: 1899ին 50 միլիոն ֆր-  
էր, իսկ 1909ին 100 միլիոնի  
բարձրացաւ: Թայմալ ալ կը հաս-  
տատնէ թէ Պալագանեան մէջ պատ-  
րաստուող նոր համաձայնութիւն-  
ները նպատակ ունին ամէնէ ա-  
ռաջ ստեղծելու անտեսական դաշ-  
նակցութիւններ:

Անարիւն Յեղափոխութիւն

Ամերիկէի խորը և վայրենալու-  
սոյ իսլամ ցեղերէ շրջապատու-  
ած Եթովպիոյ քրիստոնեայ պե-  
տութիւնը ևս վերջէս յեղաշր-  
ջումներու ենթակայ եղած է: Ար-  
դէն մէկէ աւելի անգամներ լու-  
րեր տարածուեցան թէ Մինէլի-  
կայսրը մեռած է: Բայց վերջը  
հաստատուեցաւ թէ ան 1908ին կա-  
թուածահար ըլլալով, օրէ օր ա-  
նոր հիւանդութիւնը կը ծանրա-  
նար, և այս պատճառաւ ալ պե-  
տութեան ղեկը իր ձեռքը առած  
էր անոր կինը Տաիտու կայս-  
րուհին:

Անցեալ չարթու հեռագիրները  
հաղորդեցին թէ երկրին բարձ-  
րաստիճան պաշտօնեաները պե-  
տական հարուած մը սարքելով  
երկրին կառավարութեան ղեկը  
խլեցին կայս, ուհիին ձեռքէն:

Արդէն կայսրը կաթուածահար  
ըլլալէ առաջ հանգիստոր կեր-  
պով իրեն գահաժառանգ ընտ-  
րած էր իր արդւոյն թոռը Լի-  
տի Եսսուն: Բոլորքաները և  
զինուորական պետերը հաւանած  
էին այդ ընտրութեան, Սակայն  
կայսրուհին փառասիրութիւնը  
չէր թողած որ պետութեան  
ղեկը իր ձեռքէն ձգէ: Այս ան-  
գամ իշխանները զորական-  
ները ու ցեղապետները միացած  
գահընկեց ըրին Տաիտու կայսրու-  
հին և հաւատարմութեան երդում  
ըրին Լիտի Եսսունին առջև, որ 14  
տարեկան պատանի մըն է: Բա-  
րեքադարար այս յեղափոխու-  
թիւնն ալ անարիւն եղաւ առանց  
խռովութեան և առանց ժողո-  
ւորական յուզումի: Այս շնորհիւ  
ալ օտար միջամտութեանց տեղի  
չի տրուեցաւ և ոչ մէկ օտարա-  
հրպատակըվթը արիւնեցաւ:  
Հետեւապէս Թէֆ-թիւրքերու

չափ և քիչ մըն ալ աւելի Եթով-  
պացիք (Հապէշ) հպարտանալու  
իրաւունք ունին այս յաջող և  
անարիւն յեղ. փոխութեան առ-  
թիւ:

Մ. ՉԵՐԱՋԻ ՃԱՌԸ

Ա.ՋԳ. ԵՐԵՍՓ. ԺՈՂՈՎՈՅ ՄԷՋ

Տ. Մ. Չերագ խմ. — Հայ ժողովւոյ ղին  
մէկ մասը սրբապետութիւն կ'սկստէ  
եկեղեցիները լսարաններու վերածել  
միւս մասն ալ ընդհակառակն, կ'ու-  
ղէ որ եկեղեցիները բաց մնան քաղա-  
քական բանաստեղծեանց առջև եւ  
մինչև իսկ նուազահաղէս կամ թա-  
տերական ներկայացում կարենայ տը-  
ր իր հին, եթէ հարկ ըլլայ:

Մ. Կիւրճեան խմ. — Ըն ազահանդէս,  
թատերական ներկայացում ուղղ  
չկայ:

Մ. Չերագ Տ. — Ազատամտութիւնը  
մինչև հոգ հանգներ գտնուեցան ինչ  
ինչ գաւառներու մէջ, ինչպէս տեղե-  
կացաւ լրագիրներէն: Եկեղեցիներու  
աշխարհականացումը հոգ պիտի յանգի-  
կը կրկնուի. ժողովուրդին մէկ մասը  
կ'ուզէ որ եկեղեցիները բաց մնան  
միջիններու առջև, միւս մասը ոչ  
Ազգային Վարչութիւնը, այս հակընդ-  
դէմ ուղղութիւններուն առջև, ու-  
զած է միջին ճամբոյ մը գտնել, եկե-  
ղեցիներուն բաց մնալուն հաւանու-  
թիւն տալով սա միակ պայմանով որ  
ատենաբաններն Հայաստանեայց Եկե-  
ղեցւոյ ղէմ չհասին հոգ:

Չեմ մեղադրեր Վարչութիւնը, որ  
բարեմտութեամբ շարժած է այս խն-  
դրին մէջ, այլ ընդունելի չեմ գտնե-  
ր իր բանաձեւը, որ թերի դործ մ'է:  
Ներքին չէ ըսել. «Մեր տաճարներուն  
մէջ ըսէ՛ք ինչ որ կ'ուզէք, բաւ է որ  
չխօսեք Հայաստանեայց Եկեղեցւոյ  
ղէմ»: Վարչութիւնը միայն կրօնական  
տեսակետով քննած է խնդիրն եւ վե-  
րապահու մ'ըրած է: Այլ կրօնական  
տեսակետէն տարբեր եւ ոչ նուազ կա-  
րեւոր տեսակետեր կան որոնց մասին  
ալ պէտք էր վերապահու ընել: Վար-  
չութեան բանաձեւը թերի է նոյն իսկ  
կրօնական տեսակետով, քանի որ Հայ  
աստանեայց Եկեղեցին միայն իշա-  
տակուած է: Միթէ ներքին պիտի ըլ-  
լայ Հայ եկեղեցիներու բեմէն յարձա-  
կիլ յունապաւան, հուճեկական կամ  
բողոքական Եկեղեցիներուն վրայ, եւ  
կամ քննադատութեան ենթարկել մա-  
մետական կրօնը, Յայոսի է թէ ոչ:

Կրօնական տեսակետ վերապահելով  
միթէ կարելի է անտեսել բարոյական,  
ազգային ու քաղաքական տեսակետ-  
ները. բոնց նկատմամբ Վարչութեան  
բանաձեւը լռութիւն պահած է:

Բարոյական տեսակետ. — Առանաբան  
մը առանց Հայաստանեայց Եկեղեցւոյ  
ղէմ բառ մը արտաւանդելու, եւ մինչև  
իսկ Աւետարանէն առնելով իր բնա-  
բանը թէ «Սիրեցէ՛ք զմիմեան», կըր-  
նայ եկեղեցւոյ բեմէն աղատ սէր քա-  
ղաղի (ընդհանուր ծիծաղ) կամ բողո-  
ւում բարոյական սկզբունքներէն  
տարբեր սկզբունքներ, հառադուի:  
Միթէ ներքին պիտի ըլլայ այս Ոչ  
անշուշտ:

Ազգային տեսակետ. — Առանց Հայաս-  
տանեայց Եկեղեցւոյ ղպչելու, ատե-  
նաբան մը կրնայ եկեղեցւոյ բեմէն  
դասակ ըզ յին կոխ քորագել, աշխար-  
հագանները եկեղեցականներուն ազ-  
ջատները հարուստներուն, գործատե-  
րներուն ղէմ գրգռել եւ արդէն պա-  
ռակտուիներով տկարացած փոքրիկ

ողգութիւն մը հորանոր ու աւելի ա-  
հաւոր պատակտումներու ենթարկել  
կամ, ազգասիրութիւնն ու հայրենա-  
սիրութիւնը նախ ապաշարու մ հուշակե-  
լով, աշխարհաքաղաքագիտութիւն քա-  
րողիլ, այսինքն ազգային եկեղեցին  
զործիք ընել հակազգային գաղափար-  
ներ ծաւալելու համար: Միթէ ներքին  
պիտի ըլլայ այս Ոչ անշուշտ:

Քաղաքական տեսակետ. — Առանց Հա-  
յաստանեայց Եկեղեցւոյ ղէմ խոսելու,  
ատենաբան մը կրնայ եկեղեցւոյ ղ բեմէն  
ապատմութիւն քարոզել կռուովա-  
րութեան ղէմ: Միթէ ներքին պիտի ըլ-  
լայ այս Ոչ անշուշտ:

Հետեւապէս, մէկըի քննեք Վարչու-  
թեան բանաձեւն (ըր անկատար, եւ  
մենք ձեռք առնեք խնդիրը: Թող զի-  
ւանը սովորական ձեւով քուէի ղնէ  
եկեղեցիներուն միջիններէ համար բաց  
կամ փակ մնալուն խնդիրը, եւ, ըստ  
սահմանադրական սկզբունք մեծամաս-  
նութեան կամքը օրէնք պիտի գառ-  
նայ:

Իմ անձնական կայծիքիս զաւով,  
անպատկան թիւն չեմ տեսներ որ, խո-  
րանին վարագործին իջնելէն յետոյ, ե-  
կեղեցւոյ շէնքին մէջ բանաստեղծութիւն-  
ներ սեղի ունենան, բաւ է որ չինիչ  
ընտանտութիւններ ըլլան անոնք:

Չայկեր. — Ինչ ըսելի կ'ուզէք շինիչ  
ըսելով:

Մ. Չերագ Տ. — Կ'ուզեմ ըսել ա-  
րուեստ, դիտութիւն, գրականութիւն  
պատմութիւն, մէկ խօսքով այնպիսի  
նիւթեր որոնք ունեղեցիներուն կիր-  
քերը չեն բորբեք եւ ելուայ եղբոր  
ղէմ չին զինքն: Սակայն Օսմանեան  
Սահմանադրութեան վերահաստատու-  
մէն ի վեր մեր տաճարներուն մէջ  
խօսուած գրէթէ բոլոր ճառերը տար-  
բեր ոգի ցոյց տուին եւ աւելի յեղա-  
փոխական կամ կռակական երանդ  
մ'ուեցան, որուն չիւսմակը ի մեր ժո-  
ղովուրդին մէկ մաս մասը:

Իր անդամ օրէնքի մոլորովի մը,  
չեմ կրնար տեսնալ թէ կուլիւնի, ու  
յոյնիւն, կառավարելու նախատեսել  
է: Օրէնքի մը իր դիմելք օրէնքին  
բարի կամ չոր հետեւանքները պարտի  
նախատեսել, եւ ըստ այ մ վճիւ ար-  
ձակել: Սեր, յեղափոխական պաշտօնա-  
կիցներէն ուրիշներ ալ մեր նախորդ  
նիւստներուն մէջ քանցաւ լոյստարագիցին  
թէ հակաշիջափոխական հոսանք մը  
սկսած է ժողովուրդին մէջ, իրենց  
ըսածը շատ ճշարիտ է: Հակաշիջա-  
փոխական հոսանքը Ռուստատանի Հայե-  
րուն մէջէն սլաւ եւ տյում կրտորու-  
մութիւն արտասանմանի հոսանք եւ  
միջին արտասանմանի հոսանք գա-  
ղութները, եւ օրէ օր աւելի ու աւելի  
ի կ'շնչտուի ու ծաւալ կ'գտնէ Ռեզ,  
շատ բնական է որ օր մը հակաշիջա-  
փոխական տեսնաբան մը եկեղեցւոյ  
բեմէն քննադատութեանց ու նախա-  
տանաց տարափ մը տեղայ յեղափոխա-  
կան կրօնականութեանց վրայ: Ինչ կրը-  
նայ ըլլալ արդիւնքը. — Անկեղեցիները  
կրնան երկու հակընդդէմ բանակի բաժ-  
նուիլ, պահպանողականները պիտի  
պաշտպանեն տանախառը, յեղափոխա-  
կանները պիտի փախաւ անոր ձայնը  
խնդրել, միթէ տակէ ընդհարում եւ  
նոյն իսկ արիւնհեղութիւն չի կրնար  
առաջ դալ, ինչպէս Ռեզիկայի մէջ  
պատահեցաւ: Հնչական կրօնակցու-  
թեան քանակական հասումը ներքին կամ



Հիշակեալից ու Դաշնակցականաց միջեւ, այնպէս որ ամերիկեան ոստիկանութիւնն ու դատարաններն աւելորդեցան միջամեղի մեծ անպատուութիւն Հայ անուան:

Արդէն միջեւ Ամերիկեան Թաւրիսի ալ պէտք չկայ: Հոս մեր ժողովին մէջ, մեր աչքով տեսածն ու ականջով լսածը բաւական են ըսածս հաստատելու: Մեր նիստերէն մէկուն մէջ երբ ազգային երեսփոխան Տ. Հմայեակ քնն. էքսէր-ճանն ոտքի ելաւ և սկսաւ խօսել յիշակեալականներուն դէմ. ոչ-էրեսփոխան յեղափոխականներ անոր վերաբերան քղանքը քաշելէն, լուսնեկոյն համար զայն: Վերջէն նիստին մէջ, երբ Միւրաւն Էֆ. Շիրինեան իր սէրն ու հիացումը կ'այայտէր Հայաստան-եայց Եկեղեցւոյ նպատակը, ունկնդիր յիշակեալականներ սուրբեցին զայն, ինչ որ չէր լսուած կէս դարէ ի վեր որ Սահմանադրութիւնն ունէր: Պահ մը առաջ մեր ժողովատեղին պատերազմի զայտի փոխուեցաւ և յեղափոխական ու հակադաւաճական երեսփոխաններ անուր լուսնեկոյնի ժայթքեցին բարձր գէտ: Երբ այսպիսի դէպքեր տեղի կ'ունենան այս գերազանց ժողովի մէջ ինչ, որոյ անգամները հայութեան անհիշելի են բարեկրթի մասը կ'ենթակայանեն, ինչն որ չեն կրնար սեղի ունենալ մեր եկեղեցիներուն մէջ, ուր արդարեւ ազատ մտաք պիտի ունենայ բաւականարար:

Մեր կացութեան ողբալի բնականութիւնն այս ըլլալով զօրապատարար, ես խնամութիւն կ'աւանդեմ եկեղեցիները փակ պահել քաղաքական պայքարներու առջեւ, գէթ առայժմ, մինչև որ կուսակցական ու հայաւսուցիչական կրթներն հաղթարարեալ մը չ'ընեն զանաւոր ազգային պահպանողական զանգուածներուն իրաւունքէն մտածած անտեղիութիւնը սիրոյ և միութեան վերածելու: (Խոսն Ժողովարարութիւն)

### ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Վերջերս այս դէպքերը յաճախակի տեղի կ'ունենան. մանաւանդ Վառնայի պէս փոքր քաղաքի մը մէջ 3 4 շաբաթ յաջորդաբար մէկ մէկ անձնասպանութիւն կատարուեցաւ: Փամանակէ մը ի վեր բռնկութիւնը դիւրին և կարճ ճամբայ մը գլորած է անձնասպանութեան մեկնութիւնը տալու համար: Հիւանդութեան մը հետեւանքն է որ մարդիկ ինքզինքնին կը սպանեն ըսած է ան: հետեւապէս դատապարտելի չէ անձնասպանը. շիտակ է այս վճիռը: Բայց ո՞վ պիտի ապացուցուէ գիտական պէս թէ բռնկական քաջահոգի մը ըլլալէ տարբեր ճշտարտութիւն մը չի պարունակիր այդ վճիռը: Բայց գիտական մէկ կողմ ձգելով, իրողութիւնը կը պարզէ որ վերջին անձնասպանները չափազանց եռասիրութեան զոհ են եղած, ու դատապարտուած ամեն կրօնքի առջեւ, բայց այս պիտիներուն համար սլ կը գրուի Պատ. Ամերիկեանցի նման կ'օնքի պաշտօնեայ մը որ քանի մը փրանգը չի կորսնցնելու համար, եռասիրութեան այդ զոհե-

րուն, իր անձնասպան ոճրագործներուն վրայ կրօնական արարողութիւն կը կատարէ: Իր այդ քայլով կրօնքը և քրիստոնէութիւնը նշանակելով բազմազգի բնակչութեան մը առջեւ և այդպիսինքն են որ Տիրոջը խօսքը, Աւետարանը և Քրիստոսը իրենց բերէն չեն ձգեր ու չեն դադարիր իրենց դրամագլուխը ընելէ այդ սրբութիւնները, թէ և իրենք արդէն տարիներու բեռան տակ կը քած և մէկ ոտքերինն գերեզման մը տած ըլլալ:

Ի դէպէս հոս ծանօթացնել մեր ընթերցողներուն և թօլստոյի մէկ գրութիւնը անձնասպանութեան մասին, զոր գտանք Մշակի մէկ թիւին մէջ:

«Անկանոն է, — գրում է Տօլստոյ — հարց յարուցանել այն մասին, թէ արդեօք իրաւունք ունի մարդը սպաննել իրան կամ ոչ, Այս տեղ խօսք չէ կարող լինել իրաւունքի մասին. եթէ կարող է, կը նշանակէ և իրաւունք ունի եւ մարդը, անդադար, վայելում է այդ իրաւունքը սպաննելով իրան մեծամարտի ժամանակ, պատերազմի մէջ, օդիւղէ ծխախոտով, խաչապաշտ և այլն, և Տօլստոյը քննում է այդ երևոյթը միմիայն նրա խելացիութեան և բարոյականութեան տեսակէտից, և այն եղբայրացութեան է գալիս, որ անձնասպանութիւնը անմտութիւն և անբարոյականութիւն է:

«Անհաշիւ անսպառ է, նախորդ է ժամանակակից և տարածութիւնից, և այդ պատճառով մասը փոխում է միայն նրա ձեւը: Իսկապէս ներքին իր արտայայտութիւնը, այս աշխարհում, մենք, նախ չը գիտենք, թէ արդեօք մեր արտայայտութիւնը ուրիշ աշխարհում աւելի ակնդէպի կը լինի, և միևնույն ժամանակ մենք զրկում ենք մեզ հնարաւորութիւնից՝ իմանալ այս աշխարհում այն բոլորը, ինչ կարող է տեղի ունենալ և ինչ կարող էինք ձեռք բերել: Անմտութիւն է անձնասպանութիւնը նաև այն պատճառով, որ նա ցոյց է տալիս, որ մենք թիւր հասկացողութիւն ունենք կեանքի նպատակի մասին: Կարծելով որ նրա նպատակն է զուարճութիւններ պատճառել մեզ, այն ինչ՝ անձնական կատարելագործութիւնը մի կողմից, և այն գործին՝ ծառայելը, որ տեղի ունի աշխարհիս ամբողջ կեանքում, միևնույն կողմից մարդուս իսկական նպատակն է կեանքի մէջ:

«Անձնասպանութիւնը անբարոյականութիւն է: Մարդու տրված է ամբողջ կեանքը և բնական մահով մեռնելու հնարաւորութիւն աշխարհիս կեանքին ծառայելու պայմանով: Իսկ նա, կեանքից վերջընելով միայն այնքանը, որքան նա նրան ախորժակի է, հրաժարվում է ծառայել իր մերձաւորներին, երբ այդ նրա համար ա-

րախորժ է դառնում, մինչդեռ աշխարհին ամենաախորժելի ծառայութիւնը հենց այն ժամանակից է սկսվում, երբ կեանքը նրան անախորժ է թուում: Այդ միտքը բացատրելու համար Տօլստոյ հետեւել օրինակն է բերում Վոլկինայա անապատում 30 տարի շարունակ ընկած էր յատակի վրա մի կաթնածաղար արեւայ, որը մի ձեռքն էր կարողանում միայն շարժել: Բժիշկներն ասում էին, որ նա շատ պէտք է տանջվելիս լինի, և նա բոլոր ժամանակ երեսը խաչ էր հանում ձախ ձեռքով, նայում էր սուրբ պատկերին վառած կանթիւղով և, ժպտելով, շնորհակալութիւն էր անում Աստուծուն, ուրախանալով կեանքի կայծի համար, որ փայլում էր նրա մէջ: Տասնեակ հազարաւոր մարդիկ այդպիսով էին նրան և շփուար է հաշիւ առնել այն բոլոր բարիքը, որ տարածում էր այդ աշխարհի վրա շարժվելու հնարաւորութիւնը: Ինչ դուրի այդ մարդը:

«Դանի կեանք կայ մարդու մէջ նա կարող է կատարելագործվել և ծառայել աշխարհիս, բայց ծառայել աշխարհիս նա կարող է միայն կատարելագործվելով, և կատարելագործվել կարող է նա միայն ծառայելով աշխարհիս:

### Հ Ե Ր Ք Ո Ի Մ Ն Ե Ր

Ամերիկա գործուած մարդասպանութեան մը պատճառաւ, Վահան Նալպանթեան անուն երիտասարդին Սիւրստէի մէջ ձերբակալման առթիւ Ղարաբաղի Տէր Սարգիս հօր դէմ իբր մօտենիչ եղած ամբաստանութիւնը հիմնապէս հերքող հետեւեալ նամակը կը ներկայացնենք հետաքրքիրներուն Այս նամակը գրած է տնայ ամերիկացի անձնաւորութիւնը որ այն ատեն ամերիկեան թերթերու միջոցաւ պահանջած էր որով նալպանթեանին ուր ըլլալը գիտցողները ոստիկանութեան կամ իրեն իմաց տան:

Պոսթէն մաս 11 մարտ 1910  
Արմ. Տ. Սարգիս Բհնյ. Ղարաբաղիս  
Ի Վառնա (Պոլկարիս)

Արժանապատիւ հայր՝  
Հոնորով ստացայ Ձեր հայերէն գրուած նամակը եւ ուրախութիւն պատճառեց ինձ Ձեզ ծանօթանալս: Մեծապէս զարմացայ տեսնելով որ դատին մէջ Ձեզ ալ խառնած են, եւ մեծապէս ցաւեցայ այն դժբաղդ կայութեան յորում ենթարկուած էք: Կրփութաւ իմացնել Ձեզ թէ Վահան Նալպանթեան ձեռքադրուած է եւ Պոլսէն ընդհ. Բժնիւնին հրամանին վրայ իւր արտաքսումը խնդրուած: Բայց Նալպանթեան մատնած է ինքզինքը իւր մի նամակաւ որով ջանադատ է իւր գործած ոճիւր խնտ պողտիկցեալ: Նա իւր այս տեղ գտնուող արեւի-սինիքէն միւրն գրած է, եւ այս բարեկամ բացարձակապէս ճշմարտով Վահանին ոճիւր գործողն ինք ըլլալով նամակը մեզի զրկած է իր երկտող նամակովը: Նալպանթեան իւր հոգէն

ալ ցոյց տուած է իւր սոյն նամակով: Բայց այդ երբ թարգմանել տրուեցաւ հոս գտնուող Պոլկարի մը, նամակը իւր ցոյց թէ՛ այդ հոգեւն այսօր Վահանին ցոյց տուածը նամակատուքի հասցէն է:

Միջեւ իսկ մեզի մ ձ զարմաց կը պատճառէ այս խորոյն մէջ, Ձեր անունը խառնուելով ուրիշներէն քննադատութիւնի, մինչև իսկ տեղեկատու ալ դուք եղած ըլլալիք:

Ոճրագործ Նալպանթեան չի պիտի կրնայ փոխիլ յաջ եւ յարատեւող հոգի ունեցող աւելի զոհին մօրաքրոջ ձեռքէն որովհետեւ նա երգուած է մինչև իր կենաց վերջը զայն հետապնդել ձեռքակալել տալ եւ արգարուութեան ձեռքը յա՛նձնելու համար Նալպանթեան ոճրագործը:

Տեղեւոյս ոստիկանապետը չ'զիտեր այն միջոցները զորս մեզ կը գործենք ոճրագործ Նալպանթեանը ձեռքակալել տալու համար:

Նա եղ մի միայն ըսած է թէ Լուի Առաջին յարատեւ կերպով հետեւած է ոճագործին ձերբակալման մասին մեծ ջանքեր ըրած է:

Կրնաք կարգաւ աւ գրութիւնը ուրիշներու ամեն բան պիտի հասցուի, այս երկրէն զուրս գտնուող ժողովուրդը որուն չի պատկանիր այս խնդիրը պէտք չէ անով զրադի որ իր իւստութեան վեր է եւ պէտք չ'ունի ամբաստանել զձեզ քանի որ այս խնդիրը ամենուն չի պատկանիր: Եւ ոչ ալ պէտք է խառնել այս խնդրոյն մէջ զանոնք որք այս գործի մէջ բնաւ մասնակցութիւն մեզուկցուի թիւն հոս նին:

Հաճեցէք ընդունել իմ ամենախորին ցաւակցութիւններս այն անհաճոյ կացութեան համար յորում կր տեսիք միևնույն ատեն կապանվեցում զձեզ թէ թէ գոչ բնաւ մտազոյթիւն չ'ունիք պարսաւելու այս անձեր որք եթէ պատճառաւ գառնային անոր ձեռքակալուելուն:

Յուշալով որ ամենակարողն Ած. պիտի շնորհէ Ձեզ երկար կեանք, երջանկութիւն եւ ազատ պիտի կացուցասէ զձեզ այն հոգի ինչ եւ ասանջաքները:

Մնամ Ձեր խոնարհ եւ անշնորհ որդին  
ԼՈՒԻ Պ. ԱՏԱՄՍ,  
Թարգմանեց, Գ. Ս.

«Տեղեւոյնի հետեւում  
Մեր անցեալ թիւերէն մերոյն մէջ թղթացութիւն մը գետեղած էինք զոր ընդունած էինք Սիւրստէէն, եւ որով կըսուէր թէ բանտարկեալ Վահան Նալպանթեան մարդասպանի ձերբակալուելուն պատճառն Տէր Սարգիսը սղօծ է, անոյ խոստովանութիւնը ոստիկանութեան յայտնելով:

Այսօր ի վիճակի ենք յայտարարելու թէ Տէր Սարգիս քնն. Ղարաբաղի մասնա զո. թիւն ունեցած չէ այդ մարդասպանին ձերբաւարելուն մէջ եւ յիշեալ մարդասպանը խոստովանած չէ երբէք այս պատուական քաջանային անջն:

Տեղեւոյնի  
27 մարտ 1910

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ  
ՊՐԻԱՊԱՐՏՈՒ  
Բ. Տգադրութիւնը  
Երեք հատորն ուն գիշն է  
4. փր  
Գիմել իրաւունքի իրաւորութեան



